Լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչները սահմանելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----------2017 թվականի N –Ն

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

ՀՀ կառավարության 2017 թվականի

-ի N -Ն որոշման

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունը՝ թափոնների գոյացման ծավալների և դրանց հնարավոր վտանգի նվազեցումն է՝

1) նորագույն գիտատեխնիկական նվաճումների օգտագործումն անթափոն և սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման միջոցով,

2) նյութահումքային ռեսուրսների համալիր օգտագործումը՝ թափոնների կրճատման նպատակով,

3) հետագա օգտագործման համար ոչ պիտանի թափոնների անվտանգ հեռացման ապահովումը համապատասխան տեխնոլոգիաներով՝ էկոլոգիապես անվտանգ մեթոդների ու միջոցների կիրառմամբ,

4) տնտեսական խթանման մեխանիզմների ստեղծման միջոցով:

2. Լավագույն տեխնոլոգիաների ներդրումն ենթադրում է հումքի և էներգետիկ ռեսուրսների լիարժեք օգտագործում:
3. Լավագույն տեխնոլոգիաների ներդրմանը ներկայացվող չափորոշիչներն են.

1) թափոնների առաջացման կանխարգելումը,

2) վտանգավոր նյութերի և պրոցեսների կրճատումը կամ բացառումը,

3) թափոնների վերամշակման ընթացքում առաջացող թափոնների վերամշակումը և օգտագործվող նյութերի վերականգնումը, որտեղ որ այն հնարավոր է,

4) արդյունաբերական ծավալներով հաջողությամբ փորձարկված գործունեության պրոցեսների և մեթոդների ներդրումը,

5) պրոցեսում օգտագործվող հումքի (ներառյալ ջրի) բնույթը, սպառումը և էներգետիկ արդյունավետությունը,

6) էկոլոգիական ցուցանիշների բարելավումը,

7) արտադրության արդյունավետության բարձրացումը,

8) թափոնների կառավարմանն ուղղված ծախսերի նվազեցումը,

9) ռեսուրսների՝ հումքի, ջրի և էլեկտրաէներգիայի օգտագործման և արտադրանքի ինքնարժեքի նվազեցումը,

10) շրջակա միջավայրի վրա վնասակար (բացասական) ազդեցության նվազեցումը,

11) վթարների կանխարգելումը և շրջակա միջավայրի համար դրանց հետևանքների նվազեցումը,

12) աշխատանքային պայմանների բարելավումը,

13) այլ արտադրություններից և մարդու կենսագործունեության արդյունքում գոյացած թափոնների հիմքի վրա արտադրությունների կազմակերպումը:

4. Լավագույն տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված միջոցառումներն են.

1) էկոլոգիապես կայուն արտադրության և կիրառման խրախուսումը, աղտոտման դեմ պայքարի ռազմավարությունների, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների, մասնավորապես առկա լավագույն մեթոդների և

բնապահպանական լավագույն փորձի փոխանակմանը, ընդունմանն ու ներդրմանն աջակցությունը,

2) մաքուր արտադրության տեխնոլոգիաների առավել լայնորեն կիրառման, ինչպես նաև որակի և արտադրողականության ապահովման, համապատասխանեցման և տարածման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը,

3) էկոլոգիապես մաքուր արտադրության և այլընտրանքների արտադրության ոլորտում գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանակմանն աջակցությունը,

4) էկոլոգիապես մաքուր արտադրության՝ տնտեսության բոլոր ճյուղերում թափոնների գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված սկզբունքորեն նոր մեթոդների մշակմանն ուղղված գիտական հետազոտությունների իրականացումը,

5) արտադրանքի և տեխնոլոգիաների այնպիսի տեսակների մշակման և կիրառման խրախուսումը, որոնք կապված են պակաս ռիսկայնության հետ,

6) լավագույն տեխնոլոգիաների վերաբերյալ մասնագետների պատրաստման և վերապատրաստման ապահովումը,

7) արտադրության մեթոդների գնահատման և ներդրման համար գործնական միջոցների վերաբերյալ պարզ ու հստակ ձեռնարկների և ուղեցույցերի մշակումը: